

յաւելցուք եւ մեք՝ զի մարթ էր եւ հրով տալ նշան. որպէս էր իսկ սովորութիւն առնել՝ ինչոյն կողմանս, մինչ ընդ Յունաց իշխանութեամբ էր երկիրն:

Աճեցուցանէր նմանապէս Լեւոն եւ զբարերարութեան տեղիս եւ զկրօնաստանս, եւ հաստատէր առատատուր թոշակօք. եւ զատ՝ իյոլով վանորէից՝ զոր շինեաց ասէն յիշատակագիրք, յաւելուն եւ զկարեւորագոյնս, զԱղքատանոցս, ընդ որս «կազմեաց եւ զԳողեացն տունս, եւ ռոճիկս պարգեւեաց»²²⁴. եւ բարութեամբ զաշխարհ իւր ելից... իբրեւ զդրախտ պտղաւետեալ: Շարայարող եւ աւարտող պատմագրութեան Միխայէլի Ասորոց պատրիարքի, որ եթէ ոչ ականատես, այլ եւ չէր կրսեր քան զականատեսն, այսպէս՝ի ճահ մեզ զլիաւորէ զբանսն՝ զիրացս կարեւորաց. «Պսակաւորն Հայոց Լեւոն՝ բարիոք կարգաւորէր զաշխարհ իւր՝ լայն իմաստութեամբ, եւ կարող ձեռօք ընդդիմանայր արտաքին թշնամեացն. եւ խաղաղացաւ՝ իկեանս իւր, շինեալ բազում Վանորայս, եւ զյառաջագոյն շինեալսն ընդարձակելով. առատապէս տալով զպէտս նոցա. այլ եւ Արձանագրով սեփականէր նոցա զիւզս եւ ազարակս, այգիս եւ անդաստանս. եւ զրեթէ ետ նոցա զպարարտութիւն երկրին իւրոյ, եւ առատացոյց զռոճիկս նոցա պատրաստութեամբ՝ իծովէ եւ՝ իցամաքէ. եւ ոչ միայն զհամազգի վանորեայսն այսպէս փարթամացոյց, այլ եւ զայլալեզու քրիստոնէից, զԱսորոց եւ զՖռանկաց, այլ եւ զՅունացն եւ զՎրացն... Բարեգութ լեալ առ ամենեսեան՝ բարի առնէր եկեղեցականաց եւ աշխարհականաց. եւ էին եկեղեցիք նոցա պայծառք եւ անկարօտք՝ յանապատս եւ՝ իքաղաքս, սահմանեալ մոխիք, որ մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ այսպէս բազում դրուատիւք կացեալ առ ամենայն ազգս՝ հանգեալ իՔրիստոս»: Գլխաւորք լեւոնաշէն վանորէիցն վկային Ակներ եւ Գայլու վանք, զորոց տեսցի՝ իՏեղագրութեանս:Սիբտն այն երկաթի առ ոսոխս եւ հակառակողս երկրին եւ իշխանութեանն՝ կարի կակուղ էր ՚ի կրօնս եւ՝ իկարօտեալս. եւ աւանդի իստիւ արգելեալ եւ օրինադրեալ, զի յաւուրս կիրակէի «Խափա-

« Զի ըզգողիսն որ նախատեալ
Եւ յամենայն տեղեաց հերքեալ,
Զնոսա ՚ի մի վայր ժողովեալ,
Բազմապատիկ բարեօք լըցեալ».- ՎԱՀՐԱՄ:

Իսկ ժամանակագիրն Կիլիկեցի կարծեօք գրէ. «Գողեաց տանն տեղին՝ յիշի այժմ Բօթուն,

ձոր մի, եւ ՚ի ձորուն մէջն շէն ջրաղաց մի, մօտ ՚ի սարօսն (?) հայի ընդ հարաւ»: Ի հարաւոյ երկոցուն յիշեալ աւանից նշանակի եւ ՚ի քարտի մերում Գուղ գեղ: